

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարին	համար
սարեկան	12 ֆր.
վեցամսեայ	7 "
Արսասահմանի	
համար սարեկան	15 ֆր.
վեցամսեայ	8 "
Անկերկայի	համար
սարեկան	3 ֆր.
վեցամսեայ	1.50 "

Ծանուցան սուր ու սուրբին երեսին համար 40 սանթիմի իսկ վերջին երեսին համար 20 սանթիմի է. երեսին աւելի սանթիմի համար 20 0/0 գեղջ կրկայ:

Վառնայի համար ձեռք 10 սանթիմի է

ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցեին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարին համար ձեռք 15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ ջնջում

ՇԱՐՇՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՒԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆԵՒԻՆՎ ՎՃԱՐԷ

Ս. ԳԱՐՐԻԵԼԵԱՆ

Գիշաւուր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿՕՌՍԱԿԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱՇ. ԽՈՒՆՈՐԵՍԸ ՍՕՅԻՍ ԳՈՂԱՔԻ ՎԻՃԱ. ԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ:

Տոմսակ գնել փոփոխողները կրնան իրեն գիմել՝ Զար-Պորիս փողոց Վառնա

Café Promenade Vienne

Այս շքեղ սլճարանը կը գլտնուի Վիեննա Ծրանց Ժօսէֆ քարափին վրայ. կը ստանայ զանազան հայերէն թերթեր. Առ հասարակ բոլոր հայ կամ արեւելիքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն. Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին գիմել հոս ուր պիտի գտնեն իրենց յարմար գիւրու-թիւնները եւ անհրաժեշտ տեղեկութիւնները:

ՄԻՒՍԼԻՄԱՆՆԵՐՈՒ ՀԱՍՍՈՒՆՈՒՄ

Հեռագիրները հազորգեցին թէ Ռուսիոյ միւսլիմանները կառավարութենէն թոյլտուութիւն խնդրած են միւսլիմանական համաժողով մը կազմելու, եւ ստացած են հարկ եղած թոյլտուութիւնը, պայմանաւ որ համաժողովին նիստերը գոնփակ ըլլան:

Այս յուրը այնքան նենգամիտ է, որքան անոր իրականութիւնը ծանրակշիռ Ռուսահայոց, եւ միեւնոյն ատեն ամբողջ հայութեան համար:

Միւսլիմաններու համաժողով Ռուսիոյ մէջ...

Մինչդեռ հրէաներուն կարգիւ համանման գումարում մը բռնի ուժով, մինչդեռ հայերուն ալ ապահովաբար պիտի արգիւ-ուի, թէ գիմում ընեն, թուրքերը միեւնոյն կառավարութեան

բարեհաճ թոյլտուութիւնը կը վայելեն գոնփակ նիստեր գումարելու, որոնց անշուշտ ներկայ պիտի ըլլայ ուսու բռնակալութեան գործակալներէն մէկը. ոչ միայն լուս հանգիստտես ըլլալու համար, այլ թեւադրելու, առաջնորդելու, ծրագրելու համար ով գիտէ ի՞նչ շարագուշակ ու քստմնեցուցիչ դաւադրութիւններ...

Եւ սակայն, աչքի առջեւ ունենալով կովկասի վերջին դէպքերը, դժուար չէ հասկնալ թէ այդ շարաշուք համաժողովը ի՞նչ ստակալի պատահաններու տեղի պիտի ըլլայ:

Կարգ մը դաւանական եւ վաղըֆներուն խնդիրներէ զատ, որոնց ուս կառավարութիւնը, իրր վարձատրութիւն կովկասի մէջ անոնց կատարած զազրելի սխրագործութեանց, կատարելապէս պիտի գոհացում տայ, այդ համաժողովը պիտի հաստատէ հայ-թաթարական ընդհարումներու անհրաժեշտութիւնը, հայ տարրը իրր ցեղային թշնամի մը պիտի ընդունի կովկասի մէջ իրենց յառաջդիմութիւնը արգիւ-ղը եւ մինչեւ հիմայ կատարուած մասնակի, անջատ թշնամութեանց տեղ կազմակերպուած, կատարելագործուած թշնամութիւն մը պիտի ուրուագծէ զօրացնելու համար միւսլիման տարրը կովկասի մէջ, ի հեծուկս հայ տարրին:

Այսպէս թէ այնպէս, հայութիւնը սարսուռեցուցիչ իրականութեան մը առջեւ կը գտնուի այսօր, որուն դարմանը խորհելու համար պէտք չէ այլեւս դանդաղին մեր ուսուհայ եղբայրները:

Ռուս կառավարութիւնը կը ձգտի անշուշտ այնպէս մը ընել որ ապագայ մուսլիմ մէջ կովկասի ներկայացուցիչները կարելի եղածին չափ ոչ-հայ տարկայացուցիչներու գոյութիւնը հոն մշտական փտանգ մը կը նկատէ իր քաղաքական մութ

ծրագրի ներքին համար:

Իրր ամենէն քաղաքակիրթ եւ ընդունակ տարր, հայը, կանոնաւոր վիճակի մէջ, բնական է որ սահմանադրական Ռուսիոյ կովկասի գերիշխողը պիտի ըլլայ, Ռուս կառավարութիւնը գիտէ ասիկայ, ու գիտէ նաեւ թէ, այլ եւս չի պիտի յաջողի զայն հլու կառավարական գործիք մը դարձնել իրեն: Զօրացած սահմանադրական իրաւունքներով, տիրող տարրին զգտական ներկայացուցիչներն ունենալով իր հետ, հայերը պիտի յաջողին կանոնաւորապէս առաջք առնել ուս կառավարութեան լարած էնթրիկներուն կովկասի մէջ, մինչդեռ թուրք եւ թաթար տարրերուն գերագորութիւնը, ընդհակառակը, իր թաքուն նպատակներուն իրագործման երաշխաւորութիւն մը կրնայ ըլլալ: Այս անսակէտով ուս բռնակալութիւնը կը ձգտի հայ տարրը կարելի եղածին չափ տկարացնել նիւթապէս ու քանակութեամբ, որպէսզի մուսլիմ ընտրութեանց ատեն, անկարող ըլլայ հաւաքական ուժ ներկայացնելու եւ բազմաթիւ ձայներ ունենալու:

Այս իրողութիւնները աչքի առջեւ ունենալով, կովկասահայերն ալ պէտք է որ անմիջական դարման մը խորհին: Ինչո՞ւ ասոնք ալ համաժողով մը չի կազմեն ամբողջ ուսահայերու, ուր որոշուի, ծրագրուի թէ, սակամ նա հանգամանքներու հանգէպ, իրենք ի՞նչ գիրք պէտք է բռնեն, Երբ թուրք ու թաթար իրենց համաժողովով այնքան աղմուկ կը յարուցանեն ու այնքան կը զբաղեցնեն մեզի, մենք որ աւելի յառաջադէմ ու քաղաքակիրթ ըլլալու հաւակնութիւնն ունինք, ինչո՞ւ հոյակապ համաժողով մը չի կազմակերպենք իսկոյն չեզոքացնելու համար առաջինը: Պիտի առարկուի թէ ուս կառավարութիւնը չի պիտի թոյլատրէ, Բայց ասիկայ պատճառ մը չէ անշարժ մնալու, այդ պարագային կառավարութիւնը

անգամ մըն ալ անհերքելիօրէն ապացուցած պիտի ըլլայ իր բացարձակ եղբայրացուժը թուրք ու թաթար տարրին հետ, իսկ կովկասահայերը իրենց պարտականութիւնը կատարած պիտի ըլլան: Եւ երբ օրինաւորապէս արգիւղի իրենց ինքզինքներն պաշտպանել, ոչ ոք պիտի կարողանայ մեղադրել ապագային հայերը՝ ձեռք առած յուսահատական պայքարին համար:

ՇՈՒՄ

«Ն. Հայաստան»-ը իր վերջին թիւով կը հաստատէ գոյժը

ԳԱՆՈՒՍ ԱՐԻԱՆԵԱՆԻ

աննման հայ հերոսին մահուան երջնկայի բանտին մէջ, ուր կը գտնուէր տարիներէ իվեր Յարգանք իր պաշտելի յիշատակին:

ՆԱՍԱԿ ԵՐԿՐԷՆ

Չը կարծէք թէ հանգիստ վիճակ մը ունինք, ցորչափ մեր նամակներն ուշանան՝ կրնաք որոշապէս հաւատալ թէ, մեր գրութիւնը ծայր աստիճան վատթար եւ կրիտիկական է. մեր երկրին մէջ ապրիլ կը նշանակէ տանջուիլ, շարշարուիլ. այս է մեր ճակատագիրը, ու ամբողջ Հայութեան, գրութիւնը, ահա այսպէս կը տենջար տեսնել Սգամպօլի անբարոյական տուներն մէջ սողոկող փտախաչը: 20րդ դարու իսլամի շնափառ յարալեզը, իր ամբողջ գիււային ծրագրիները ի գործ դրու կատարեալ յաջողութեամբ. ու այսօր իր ոճրագործ ձեռքերով կարմիր մօրուքը չփելով, «հայրախնամ» հոգածութեան խօսքեր եւ խոստումներ կընէ հայ ժողովրդի մասին, իր սիրելի Օրմանեանին. այն «գովելի գիււանագէտ, զարգացած» խրտուելակ պատրիարքին, որ իր անուանական պատրիարքութեան օրով իր արժանի կոչումին չը ծառայեց, դրժեց իր հաւատար-

մական ուխտը, ականջները տ-
մուր մը գոցեց չը լսելու համար
իր մեծ վարդապետին որոտացած
պատգամները, կոյր և սարուկ
համակերպութեամբ շարունակ
փարած մնաց Մուհամմէտի փո-
խանորդին ոտքը. այս բոլորը
կընէ միայն իր սիրելի փատի-
շահին հաճելի երեւնալու համար
որոյ փոխարէն կոկիկ պատշիշ-
ներ օսմ. ականակուռ անպատիւ
մետաղներով իրեն և իրեննե-
րուն կուրծքը և փորը կը զար-
դարէ: Իսուն ու աղէկը-
տուր իրողութիւնները և փոր-
ձերը կըստիպեն մեզ գրելու մեր
արտասահմանի հարազատներուն
մեր անուանական պատրիարքին
բռնած դիրքը յանգէպ իր ժո-
ղովրդին:

Երբեք չի վիճակին հրահանգ-
ներով կաղապարուած հաստափոր
Օրմանեանը ամենամեծ շարիքը
եղաւ մեր գծաբախտ թրքահայե-
րուս գլխուն և մասնաւորապէս
այս վերջին տարւոյ մէջ, իր
այդ պաշտօնին անկարող մարդ
մը ըլլալը ցոյց տուաւ:

Երբեք չի բռնաբերուած պայթումին
հետեւեալքով շատ մը անմեղ հա-
յեր ձեռքակալուած են թէ Պոլսոյ
և թէ զաւառներու մէջ. Պոլսոյ
մէջ բանտարկուածներու բարե-
կամները Պատրիարքարան կը գի-
մեն Օրմանեանին խնդրելու որ
միջնորդութիւն մը ընէ այս ան-
մեղները ազատելու համար,
պատրիարքարանի դուռը հաս-
նելուն պէս զաւազները չեն ձը-
գեր ներս մտնել և վրդովուած
ձեռով մը կը վռնտեն այս անկա-
րելից թշուառները, որոնք ի-
րենց ազգային տունին մէջ կա-
րելիցութիւն մը գտնալու յոյսով
հոն կը գիմեն, բայց նա ալ իր
դռները կը զսցէ անոնց առջեւ,
և նոյնպէս հաղարաւոր դիմումներ
բանտարկեալներու, այրիներու,
որբանոցներու, գայրոցներու,
վանքերու, անհովիւ թեմերու,

գիւղացիներու, վաճառականնե-
րու, անտուն անտէր ազգատնե-
րու, կողմին. թէ գիւղերին և թէ
քաղաքներին այսպէս, Սերաստիա-
յէն, Տիգրանակերտէն, Վանէն,
Կարինէն, իրենց շրջակայ զա-
ւառներով կը գտնուին այն տե-
սակ գրութեան մէջ. որ մեր կող-
մէն բառեր կը պակսին որ բնո-
րոշն այն աներեւակայելի գրու-
թիւնը, որուն մէջ կը գտնուի
ամբողջ թրքահայութիւնը. ու
այս բոլորին ազիրողութեամբ
արցունքը, խնդրանքը, Գուճգա-
բուր ազգային հոգեւոր և քա-
ղաքական պետին քով կը մնան,
ոչայն բաւաբառոյ անպատիւ:
(Շարունակելի)

ԱՅԺՄՈՒ Շ Ո Ւ Մ Լ Ա Ն

Ամէն տեղ ու ամէն ժամանակ
քաղաքակիրթ համայնքներէն սկսած
մինչև վայրենի ու վաչկատուն ցե-
ղերը, մոզովորդներու հասարակա-
կան կեանքի ու յեղաշրջութեան շըր-
ջանում տեղի ունեցած երեւոյթնե-
րը, հակընդդէմ շարժումները, ըմ-
բռնումները, հասկացողութիւնները,
զատեակեցումը, իրարու դէմ ծառա-
ցած՝ գաղափարի ու իտէլիկ պայքա-
րը, մտաբարբի կոխը իրենց ջա-
տագով ու դարձուցները, ներքողոյն
ու իրենքի հակառակորդները, հե-
րոսներն ու մտափրոսները ունեցած
են ու պիտի լուսնան:

Հասարակական ինչպէս նաեւ ան-
հատական կեանքի մէջ տեսնուած այս
երեւոյթը շատ բնական է ու տրա-
մաբանական, եւ այլապէս հակար-
նական պիտի ըլլար ենթադրելու
պահանջով, որ ժողովուրդներու կեան-
քի օղակաւորումը կազմող ամէն հա-
սարակական շարժում ու երեւոյթ,
ասանց նախընթաց դիմադիր խոչն-
դոտներու գոյութիւն ունեցած ըլ-
լային և ընդունելութիւն գտած:
Այս պարագայում, մարդկային ազ-
գի պատմութեան մէջ իմացականու-
թիւնը գոյութիւն չպիտի ունենար,
ո՛չ ալ կարելի պիտի ըլլար ազգերու
հոգեկան ու մտաւոր զարգացման
հանգոյցն ու աստիճանները որոշել:
Առանց՝ մարդկային ազգի կեանքի

մէջ տեսնուած՝ այս հանգամանքին
չը պիտի երաշխաւորուէին ազգերու
մէջ ժամանակի հետ ու անոր ազ-
դեցութեամբ յառաջ եկած կենսու-
նակ շարժումներու գոյութիւնը. ո՛չ
ալ հաստատուն կուտանի վրայ զըր-
ուած մարդկութեան յառաջացումը:
Ի՛նչ չափով, որ մարդկութեան մէկ
մասը հնոյն կառուած՝ կը դիմադրէ
նորին նոյն եւ անկէ աւելի թա-
փով. կողքակիցի կեանքի նոր ու ժա-
մանակայարմար պայմաններու հետե-
ւող սերունդը. եւ այդ ոգեպնդումը
բնական անյղիթ օրէնքը, յառաջ ե-
կած՝ հնոյն ու նորին պայքարէն,
կապահովէ մարդկային յեղաշրջումը:

Իսկ ժամանակը իր անգիմազիր
ուժովը, կուգայ հնոյն ու նորին
միջեւ, գոյութեան վերջակէտը դնել
վերջակէտ մը որ ի՛նչեւ հնոյն մահը
կը բերէ բայց նորնա՛յ շարժութեան
վարդագոյն առաւօտը կաւետէ:

Այսպէս եղած է միշտ ու պիտի
ըլլայ, ցորչափ նպատաւորող պայ-
մաններ ապահովեն մարդկային սզ-
գի կեանքը երկրագունտի վրայ:
1900 տարեկէ սկսեալ Շումլայի հա-
սարակական կեանքի մէջ յեղաշրջու-
մի թուական մը բացուեցաւ. Ազգ-
պաշտօնական շարժումներու, հոգա-
բարձութեան ու թաղականութեան,
իրենց խնամոց ու հոգածութեան
յանձնուած հաստատութիւններու
հանդէպ ունեցած անպարտաճանաչ
վերաբերումը, պաշտօնական մար-
մններէ պահանջուած հանգամանաց
անգիտակցութիւնը և կեղծեցական
ու կրթական շահերու, անձնական
կրքի ու նկատումներու զոհուիլը,
ժողովրդական բողոքի հոսանք մը
յառաջ բերաւ: Այն ատենի թաղա-
կանները, գերմարդկային ճիգեր
թափեցին իրենց սխալը պարտկու-
ելու այդ բողոքի ձայնը խղիչու հա-
մար. անոնց համար ժողովրդի բո-
ղոքը կարեւորութիւն չուներ. իրենք
զիրենք ժողովրդի ճակատագրին բա-
ցարձակ ու ինքնիշխան տէրը կը
կարծէին. անոնք նեղ ու ենթադ-
րական կանխակալ ըմբռնումներով,
ժամանակի տեղծած այդ անխուսա-
փելի հանգամանքը, յեղաշրջութեան
սկզբնաւորումը, անձնականացեալ
ընդվզումներու և թշնամանքի կը
վերադրէին, ժամանակի յառաջ բե-
րած ու ծնուցած գիտողութիւննե-
րուն, իննադատութեանց ու բարե-

շրջութեան անխուսափելիութիւնը
մատնանշած հարցերու մէջ խտացեալ
ատելութիւն մը տեսնելով, այս ըմ-
բռնումի համապատասխանող վերա-
բերումով կրննա՛յին:

904-ով մեր թաղականներու քառ-
ամեայ շրջանը կը բողոքէր. եւ
վերջնական բարեկարգութեան բաղ-
ձացեալ վարդագոյն առաւօտը կերա-
զէինք տեսնել 904-ի վերջներն ընտ-
րուած թաղականներու օրով: Մէկէ
աւելի իրողութիւններ, ժողովրդա-
կան այդ հոսանքի յուսախաբութիւնը
հաստատեցին, անկախուած բար-
ւոքումներն ու ի ձայն թմրկի եղած
խոստումները չիրականալէն զատ,
նորերը հիններուն փողար պաշտպան-
ները զարձան, հաշուական ու վար-
չական բարեփոխութեան պէտքին
սովիւ եղած զիտողութիւնները, պա-
հաններն ու բողոքները անխելի
մնացին, ժողովրդի կողմանէ թաղա-
կաններուն եղած ամէն հաշտարար
ու օրինաւոր դիմում տարբեր կեր-
պով մեկնուեցաւ. թաղականները,
զօրախտաբար չի կայողացան ըմբո-
նել ու հասկնալ որ այս ընդհանուր
ու զօրեղ բողոքը ժամանակի պա-
հանջ էր ու անձի հետ ու եւ է առն-
չութիւն չուներ. անոնք չկրցան
վերահասու ըլլալ, որ վարչական,
հաշուային ու մատակարարութեան
բարեշրջութեան պէտքը անխուսա-
փելի, անհրաժեշտ ու էական է:
Այսու, Շումլայի հայ համայնքի մե-
ծամասնութիւնը 1905 նոյն 20-ին խոր
հրդարան գիմնելով, ժողովրդի ձա-
կատարին հետ անխղճօրէն խաղա-
ցող թաղականները զուրս հանեց
(Մ. Միրիճեան, Մ. Յովսէփեան, Յով-
հաննէս Քիօսէեան և Կիրգոր Աւագ-
եան):

Թաղականները կուտարութեան
դիմեցին. պ. պ. Նահանգապետի,
Պրովորորին եւ ոստիկանապետի մօտ
յեթիւ բանքերը ըրին և նոյն իսկ
Պատրիարքարան գիմնելով ուզեցին
նստացնել ժողովրդական բողոքի
ձայնը, բայց արդարութիւնը տարաւ
իր յաղթանակը եւ կուտարութիւն-
նը բողոքողներու իրաւունքը հաս-
տատելով որոշեց որ յուլիսի 15-ին
թաղ. ընտրութիւն ըլլայ: Պատրի-
արքարանը ժողովրդի մեծամասնու-
թեան արամադրութիւններուն հաս-
տատապէս զիտակ ըլլալու համար
խնդրած էր պուլկար կառավարու-

Օ Ք Թ Ա Վ Մ Ի Ր Պ Օ
Ա Պ Պ Է Ժ Ի Ի Լ
Բ. Մ Ա Ս
(Հատուածներ)

Տարօրինակ զգայնութիւններ կու-
նենայի, կարծես գլխուս մէջ ծան-
րութիւն մը կար: Սա բառերը.
սէր, հաճոյք, բաղմոց, արծաթեայ
բաժակ, Ռէյմօն, Նուէն, այս համ-
բոյրները, այս սպիտակափայլ ու
սերը, այս բոլորը զիս տակնուվրայ
կընէին, ինձի այնպէս կը թուէր
թէ գրքին տառերը անհանդարտ ձե-
ւեր կը զգոնուէին, ծանօթ բաներու
պատկերներ, երազուած. ենթադ-
րուած կերպարանքներ, որոնք կը
շարժէին ու կը ծիծաղէին: Սրտիս
զարկը սկսաւ արագանալ, քունքերս
փափախել. նոր հուր մը երակներուս
մէջ կը պարբերէր... կը լսէի հօրեղ-

բօրս շնչառութիւնը որ կը խոպոտէր
անկապ հառաչանքներով ընդմիջուած
... Ի՛այց ինչո՞ւ... Կորոշեմ կամա-
ցուկ մը քննել զայն... աչքերը միշտ
փակուած կը մնան, բազուկները
միշտ առկախ, ու մարմինը մերթ-
ընդ մերթ կը ցնցուի ջղային սար-
ուռով մը... կը քնանա՞ր արցիօք...
Սարսափը կը տիրէ վրաս... կուզէի
փախչիլ...

—Շարունակէ՛:
—Ու կըսկսիմ շարունակել գողգո-
ջուն ձայնով... Իր թարմ ու թուր
բազուկներով կը գրկէր զայն, իր
երկար մազերով կը ծածկէր իր խո-
շոր սեւ աչքերը այրող մեղկութիւն
մը կը նեւէին, ու արեան տաքու-
թիւն մը, ամբողջովին արեւելեան
հեշտանք մը, որ կամքին բոլոր ճի-
գերը եւ մտածման բոլոր ըրրութիւն
ները կը յաղթահարէ, Ռէյմօն ամէն
բան մտոցաւ, թէ իր որոշումները,
թէ իր նոր սէրը եւ թէ գտնուած
տեղը Նուէնը իր զգլխի զգուանք-

ներով պարտերց. իր շրթունքները
միեւնոյն զաժակը թաթխուեցաւ ու
իրենց ձեռքին մէջ բռնած թուրը գի-
նին վերջապէս անոնց խելքը ա-
ռաւ...

Կարծեցի թէ հօրեղարայր խօսեցաւ
... կանգ առի... Արդէն շունչ առ-
նելու պէտք կը զգայի:
—Շարունակէ՛, բայց շարունակէ՛:
Ինքզինքս ամփոփելու ճիգ մը ը-
նելով, ջանալով զսպիլ միտքս որ կը
գայթակղէր, հաւաքել զաղափաթերս
որոնք կը մոլորէին, շարունակեցի.
«Հայելիի երկու տապակները,
որոնք իրարու կանգրադարձնէին
նուրի պատկերը յաւիտեանակա,
կարծես հազար ուրուականներով կը
լեցուէին»:

Ու կը տեսնէի այս ուրուակա-
նները որոնք կանցնէին, կը մարէ-
ին, կը վերերեւէին, անկատար, հը-
րաշալի, հերարձակ, ստինքնիւ ին-
կած, գիրկընդխառնող ժեստերով...
Ու ես կը կարգամ, կը կարգամ ան-

ընդհատ... տողերը աչքերուս տակ
կը վրկային, գիրքէն դուրս կելլեն,
սեղանէն կը սահին, կուտունն, ամ-
բողջ սենեակը կը գրաւեն... Ու ես
միշտ կը կարգամ... Շուտով, շըն-
չասպառ, հեւալով, երեցող բանդա-
գոյ շակաւ պատկերներու մէջ, կը ճան
չնամ մէկ քանի ծանօթ դէմքեր, ու
որոնք պիղծ մերկութիւններ կը պար-
զեն, անծանօթ գիրքեր կը կրկնեն...
Իմ բոլոր յիշողութիւններս մարմին
կառնեն ու կը խառնուին այս դժո-
խային շրջապարին... ու ես կը կար-
գամ:

«Նուէն էր որ զայն կը կանչէր եւ
կը ժպտէր անոր մուկիւնէ այս
սպիտակ վարագոյրներուն ետեւէն.
ան էր զարձեալ զոր երազեց Ռէյ-
մօնտ անկողնին մէջ, երբ սէրէն ու
գինիէն ընկճուած՝ իր հերարձակ գաղա-
թածինը գիրկը քաշեց»:
Յանկարծ լռեցի: Արեան, փիճում
մը արչքերս կուրցուց, Ականջներս
կը բզզային, սիրտս կը նուաղէր

Թե՛ն էն որպէս զի տեղւոյս պ. Նահանգապետի (որ կարող ու լուրջ պաշտօնեայ մըն է) միջոցաւ քննութիւն մը կատարուի: Յունվար 15ին պ. Նահանգապետը Աղգ. Խորհրդարան գալով հէի դէմ 86 ձայնով տեսաւ, որ մեծամասնութիւնը յառաջդիմականներուն կողմն է ուստի ինքը առաջարկեց, որ կատարութեան միջոցաւ Աղգ. Պատրիարքարանէ նոր ընտրութեան հրաման բերուի. յառաջդիմականները առանց ո եւ է առարկութեան ընդունեցին պ. Նահանգապետին այս առաջարկը եւ խնդրեցին, որ փութով հրաման մը ձեռք բերուի:

Ահա՛ այս հարցն է որ դաւաճանութիւն նկատուած է «Իրաւունք» չարամիտ թղթակցէն. որ մտքերը պղտորելով դիտուածով, «Իրաւունք» թղթակցի իսկ փորձութեան անպատրաստութիւնը հր. «Իրաւունք» թղթակցի 906 տարւոյ հրդ թիւին մէջ:

Ժողովրդական ամէն յեղաշրջական շարժում, խեղաթիւրած յերուրանքներով դաշնակցականներու վերագրուելու շարժումներուն, առանց հաստատ ցուցումի հաւատ ընծայելով, «Իրաւունք» թղթակցի իրմէ պահանջներ լրջութեան դէմ մեղանշած կըլլայ. այդքան հապճեպ դատաստան մը ընելու չէր թիւրիմացութեան զո՛ւ չըլլալու համար: Եղած ժողովրդական շարժման մէջ ո եւ է յեղափոխական կուսակցութեան ազդեցութիւնը չիկայ, և պէտք ալ չիկայ, որովհետեւ Շումլացին իր տեղական գործերու յեղաշրջումին համար կարող ու ձեռնհաս անձեր ունի:

Իսկ եթէ թող. Խորհրդոյ մը Աղգ. պատրիարքարանէ վաւերացուելէն զատ, պուլի. կառավ. կողմանէ վաւերացուիլը դաւաճանութիւն է, ուրեմն դաւաճան համարուելու են, «Իրաւունք» թղթակցին համեմատ, բոլոր աղգ. վարժ. հոգաբարձ. ընտրութիւններուն մասնակցող պուլիարարահայերը, քանի որ պուլիարահայերս պուլի. կատարութեան վաւերացող մարմնոյ ընտրութեան կը մասնակցենք առանց պատրիարքարանի գիտութեան ու հրամանին: (*)

Արտաշէս Կարապետեան

(*) Յօդուածագիր պարոնը սխալ դատողութիւն մը կընէ հոս: Օտար միջամտութիւնը միշտ վնասակար է մեր գործերուն, հետեւաբար անկէ

միշտ խոյս տալ ջանալու ենք: Կառավարութիւնը մեր վարժարանական գործերուն կը խառնուի եւ մենք տեղի կուտանք որովհետեւ ուրիշ բան չենք կրնար ընել: Ուրախ ըլլալու ենք որ եկեղեցական գործերու դեռ չի խառնուի. իսկ կամովին երթալ անոր միջամտութիւնը հրաւիրելը, ինչ առիթով ալ ըլլայ, առնուազն վատութիւն է:

Մ. Ս.

ԱԼՔՈՒՆ ԱՂԵՏՆԵՐԸ

Արքեպիսկոպոսներն երբք դասակարգի կրնան բաժնուիլ. — մոլորները, արհեստով խմորները, և կանոնաւոր խմորները, թէև շատ մը պարագաներու մէջ բոլորովին տեսական է այս բաժանումը: Մոլորներն անոնք են որք գիւնդութեան պատճառած բիրտ հաճոյքին համար միայն կը խըմեն: Արհեստով կամ արհեստի բերմամբ խմորները կը մուրի կարգ մը պայմանադրական պարտաւորութիւններու հետեւանքով: Գործեր կան, սակարկութիւններ, առևտուրներ, որք գիւնդութեան մէջ կը կտրադրուին և յաճախ իրենք ալ կը հարկադրուին յաճախորդներուն հետ բաժակ պարպել: Գործի ըլլալու համար: Մեքենագործները, հնոցպանները, երկաթի ու կրակի հետ աշխատող գործաւորներն իրենք ալ զոներն են «արհեստին», որ արքեպիսկոպոսները կը պահանջէ: Կազմուիլը ըմպելիքները, ապսէնդը մանաւանդ, այդ վերջին դասակարգին մէջ աղետալի աւերումներ կը գործեն եւ ծանր հարկ մը վճարել կուտայ անոնց՝ թողախտին, վասնզի՛ ինչպէս ըսած է Հայկ. յայ. ճախ գիւնդութեան սեղանին վրայ կը ստացուի թողախտը:

Նրորոք դասակարգը կը կազմեն, ինչպէս ըսինք, կանոնաւոր խմորները. անոնք որ առողջական պատրուակով և իբր թէ կաղաւթուելու համար կը խմեն, շափաւոր քանակութեամբ գինի և ի ք ս ի թ թ ի շատ բժշկականապէս պատրաստուած, բայց միշտ սլքով խառն, որք իրենց յաւակնոտ են խմորութեան հակառակ աւելի վնասակար են քան օգտակար: Արքեպիսկոպոս զանազան եղանակներուն ամէնուն ալ հետեւանքը կըլ-

լայ ի ծնէ առողջ կազմուածքի մը մէջ փոփոխութիւններ յառաջ բերել մարմնական գործարաններու, մանաւանդ շնչառութեան վրայ, որք ընդունակ կըլլան թողախտէ վարակուելու: Սա ճշմարիտ է թէ գինին և գարեջուրը նուազ զոներ կուենան, ոչ միայն անոր համար որ զանոնք գործածողները շափը չեն անցըներ, այլ մանաւանդ անոր համար որ այդ ըմպելիքները շատ ալքով չեն պարունակեր: Նոյնը չէ սակայն միւս ոգելից ըմպելիքներուն համար, մասնաւորապէս օղին, քօնեաքն և ամբողջ շարքը «կազմուիլ» ներուն՝ վէրմուտ, ամէն, ևն:

Այս ոգելից ըմպելիքներն են անաորոնք ամէն օր կը թունաւորեն մարդկութիւնը: Վասնզի կը կրկնենք իրենց պարունակած խառնուրդ ալքովն զատ, կը պարունակեն տեսակ տեսակ հիւթեր, մէկը միւսէն տելի թունաւոր, և այս բոլոր մկնաձգտական և թմրեցուցիչ հեղուկները՝ կեանքը կարճեցնելով արքեպիսկոպոսները կը հարկադրեն: Այս խմորիքներն աւելի աղետալի դարձնող պարագան սա է թէ՛ մեծաքոյն մասամբ խարդախուած են: Եւ արգարեւ, անձնական խուզարկութիւններու տարբարուածները զորս կատարած եմ այստեղ սպառող կարգ մը խմորիքներու վրայ, ապացուցած են ինձ թէ խարդախութիւններուն թիւը շատ աւելի է քան հարազատներունը:

Ուստի պէտք է հակադրել, և հնար եղածին շափ շուտ: Առանց վարկեան մը կորնցնելու պէտք է սկսիլ հակալքական նուիրական պայքարին, գէթ փրկելու համար զանոնք զորս ալքով չէ զգեանած տակաւին: Փերկե՛ք մանաւանդ մանկութիւնը, «Ալքովամուրութեան սահմաններն առ յաւէտ գլխի անցնելէ առաջ, մարդ պէտք է գիտնայ թէ տակաւին կրնայ բժշկուիլ, կրնայ բարելաւել իր վիճակը, էականը կը կայանայ ալքուրամը յուսադրելուն մէջ թէ անհնար չէ իր վերադարձը գէպի ուղիղ ճամբան եւ ասոր համար իրեն հայթայթելու է հարկ եղած ֆիզիքական ու բարոյական միջոցները, որպէսզի կարենայ հրաժարիլ իր դեգերանքներէն, հարկ է ցոյց տալ իրեն՝ ամէն վարկեան իր ոտքերուն տակ բացուած անդունդը, իսկ զինքն

ալքովին յարուսէն, միշտ և ամէն ժամանակ ներշնչելով առողջ գաղափարներ ու փրկարար օրինակներ: Խօսքի, գրիչի, տեսնուածներու ազդեցութեամբ, պէտք է հեռացնել զինքն իր մոլութենէն, որուն գերին եղած է. և այդ մարդը, որ արքեպիսկոպոս հակուումնի կամ արքեպիսկոպոս ծնողաց զաւակ է, եթէ համոզուի թէ ինչ պիտի ըլլայ իր վախճանը, եթէ նախազգայ իրեն սպառնացող վտանգը, կրնայ տակաւին վերադառնալ կանոնաւոր վիճակի մը և ազատիլ ալքով թունաւորութիւնը: (Շարունակելի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլիարիոյ և Թուրքիոյ միջեւ 1900 ին կայացած, մաքսային համաձայնութեան գործադրման մասին, վերջերս երկուստեք դժուարութիւններ յարուցուցան: Մաքսային պաշտօնէտութիւնները սկսան մաքս ստանալ այն ամէն ապրանքներէն որոնք երկրի զուտ արտադրութենէ չէին շինուած, այսպէս, գրեթէ մեռած տառի մը վճարածելով գոյացած համաձայնութիւնը: Դուռը դեռ ասկէ շատ առաջ առաջարկեց յանձնախումբ մը կազմակերպել, որպէսզի քննէ յարուցուած դժուարութիւնները, սակայն ինչ ինչ պատճառներով յանձնախումբը չը կայացաւ: Հիմայ դարձեալ Բ. Դուռը առաջարկած է երկրիս իշխանահան կառավարութեան, որ 20 օրուան պայմանաժամին մէջ կարգէ յանձնախումբ մը քննելու համար մաքսային համաձայնութիւնը ամբողջութեամբ: Հակառակ պարագային Բ. Դուռը կը սպառնայ ոչինչ համարել համաձայնութիւնը, և պուլիարական ապրանքներէն ինքնիշխան սակացոյցին համաձայն մաքս տանել: Պայմանը կը լրանայ ամսոյս 23 ին: Երկրիս կառավարութիւնը պատրաստակամութիւն ցոյց

արքեպիսկոպոս յեղակարծ ալիքէ մը ողող ուած... Ոչինչ կրնայի զանազանել, ոչինչ կրնայի լսել... Կուզէի պոռալ, կանչել, որովհետեւ կը կարծէի թէ պիտի մեռնիմ...

Սակայն գրադարանին լուծութիւնը զարմանք ազդեց ինձի: Հօրեղբորս շրջառութիւնը չէի լսեր, վարկեան մը յամր վարկեան մը սահեցաւ: Ոչ մէկ յունջ, ոչ մէկ շարժում նստած աթոռին վրայ: Ինչ եղած էր... Մեղմ ձայնով՝

- Հօրեղբայր, ըսի:
- Պատասխան չիկայ:
- Հօրեղբայր...:
- Զի շարժի՞ր... Ականջ կը դնեմ, չունջ ալ չտաներ:
- Ու անաւոր կասկած մը մտքէս կանցնի, Հօրս ըսածը միտքս կիյնայ. «վարկեանէ վայնկեան կարելի է մահուանը սպասել»:
- Հօրեղբայր:
- Այս անգամ բոլոր ուժովս պոռայի խելակորոյս, Ոչինչ:

Ոտքի ելայ դողդղայով, աչկոտներս իրար զարնելով: Հոն փոռած, կարծես պառկած էր. բայց դէմքը շատ տոգոյն էր: Ու դարձեալ միտքս կիյնայ հօրս մէկ հարցումը. «Իրտեցի՞ր որ ծուռեղբրը կուռէին»: Այո, շատ խոշոր երեւցան աչքիս... Ու չէր շարժեր ալ... Ծանձ մը ճակատին վրայ կը չըլէր, կը սահէր յօնքերէն, քիթին ի վար կիջնէր, նորէն վեր կեւլէր: Բայց հօրեղբայրս չէր շարժեր: Զեռքը բռնեցի. բայց ցուրտ էր: Զերմակ փրփուր մը իր փակ շերթներէն կեզերէր:

— Հօրեղբայր... հօրեղբայր: Մատները սկսան շարժիլ շրթունքին փրփուրներուն մէջէն տրտունջ մը կը վրիպի, յետոյ ուրիշ մը, յետոյ երրորդ մը: Գիշ քիչ դէմքին մը կանները որոնք կձկուած էին, կը թուլանան. ծնօտը կը դիզի ու կը կրճտայ, թոքերը կուռին, կը շնչեն, աչքերը կէս մը կը բացուին, ու իր բերնէն որ կեանքով լեցուել կը ջա-

նար, դուրս կեւլէ երկար հառաջ մը, երկար հեծածանք մը:

- Հօրեղբայր... հօրեղբայր... Այս անգամ անձկութեան ազդակ չէր, այլ ուրախութեան ճիշ... հօրեղբայրս կապէր:
- Աչքերը ինձի գարձուց, աչքեր որոնց նայուածքը կարծես անդունդէն, դժոխքէն կուգար: Դեռ բոլորովին ինքզինքը չէ գտած: Ծարունակ ինձի ու պզտիկ սեղանին կը նայէր, որուն վրայ գիրքը դրուած էր... կը փնտթէ, կը հարցափորձէ, կը պաղատի:
- Ալկարթ, դո՛ւն ես:
- Այո, հօրեղբայր, ես եմ:
- Ու վշտագին դէմքով, անհուն տըխրութեամբ լի գթութիւնով մը, զոր երբէք չի պիտի կրնամ մոռնալ, հօրեղբայրս ըսաւ:
- Հէք փոքրի՛կ... գնա... հէք փոքրի՛կ...
- Ոչ, հօրեղբայր, դուք հիւանդ էք... պիտի խնամեմ զձեզ:


— Դնա՛... հէք տղե՛կ... անցաւ... դնա՛...

Յաջորդ օրը հօրեղբայրս բակը վառող խարոյկի մը առջեւ նստած գըտայ. քովը դէզ մը կար գրքերու: Մի առ մի զանոնք կտանէր, կը պատուէր, ու խարոյկին մէջ կը նստէր:

— Կը տեսնե՞ս, ըսաւ, կայրեմ կոր... Զեռքը կուրծքին տարաւ ու խորունկ զզուանքի արտայայտութեամբ մը ըսաւ:

— Բայց այս տնաւոր գիրքը պէտք է ջնջել, սրտիս այս անաւոր գիրքը... Ու կը գիտէի օղին մէջ բարձրացող ծուխը, կապոյտ ոլորաններով, որ կանհետանար. կը հեռեւէի այրող թուղթին փոքրիկ կտորուանքներուն որոնք կը թռչտէին հովէն վանուելով չորացած տերեւներու պէս:

(Շարունակելի)



կուտայ Բ. Գրան այս իրաւացի պահանջին և կը յուսացուի թէ՛ նշանակուած յանձնախումբը պիտի փութայնէ գործերը, և մօտ օրէն կարելի պիտի ըլլայ գործոց նախկին վիճակը հաստատել, 1900 ի մաքսային գաշնագրութեան համաձայն:

— Ամսոյս 26 ին, կէսօրէն վերջ ժամը 4 1/2 ին, օրակարգին աւարտելէն ետքը, նախաբարապետ Բ. Բէդրով, Երեսփոխանութեան յայտարարեց թէ՛ ն. Ա. բարձրութիւնը զինքը փոխանորդագրած է փակել նիստը:

Բոլոր երեսփոխանները ոտքի վրայ օւնկնդրեցին իշխանական հրամանագիրը, որ մեծամասնութեան կողմանէ բուռն ծափահարութեամբ ընդունուեցաւ:

— Գործաւորներու կողմանէ, արուեստաւորներու օրէնքի դէմ սարքուած ցոյցերու հետեւանօք, երեսփոխանութիւնը, նախաբար կէնատիէլի առաջարկութեան վրայ, այս օրէնքի 43 դր. յօդուածին փոփոխումը քուէաք կեց: Այս յօդուածը կը ստիպէր որ գալֆաներն ալ արուեստաւոր չոր պահին երուրնկերութեան մէջ ներմուծուին, առանց սակայն օգտուելով օրէնքիս տրամագրութենէ որպէս չոր պահի մը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Եւմէնէն հասած լուրերը կը հաստատեն մէյլի փաշայի գերութեան վատթարանալը, իր 25,000 հոգիէ բաղկացած բանակէն մնացած միայն 10,000 զինուորներովը և քիչ ռազմամթերքով փակուած է Սանաաի մէջ: Այս գրութեան մէջ մէյլի փաշան չպիտի կրնայ երկար դիմանալ և ստիպուած պիտի յանձնէ Անանան: Իրեն զգնութիւն ուղարկուելը տարակուսելի է որովհետեւ կառավարական սընտուկները պարապ են և փոխադրութեան միջոցները կը պակսին: Իրան յուլումները հետզհետէ կը բազմապատկուին:

— Պօլսէն կիմացնեն թէ՛ Սուլթանը զինուորական նախարարին հրաւիրած է՝ շտապեցնել Ատրիանապոլսոյ նահանգի ամբուստներուն շինութեանց աւարտելը:

— Պօլսէն նորահաս լուրերու համաձայն Բ. Գուրը մտադրած է իզմիրի պահակազօրէն 2000 հոգի և չորս վաշտ գաշտային թնդանօթածիգներ ուղարկել Հոտէյտա, մէյլի բաշայի օգնութեան համար:

— Պիլմիլիկամբոսդ լրագիրը կը ծանուցանէ թէ՛ ներկայ անգլիական գահի թուրքիոյ

հանգէպ քաղաքական աւելի խիստ ընթացք մը բռնելը յարմար չեսած է:

Այս մասին, Պօլսոյ անգլիական դեսպան Սըր Օգստրոնի հրահանգներ արդէն տրուած են:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

«Նշանօթ թէլէկրաֆ» լրագրին Բեթերսպուրկէն կիմացնեն թէ՛ ամսոյս 22 ին զօրավար Օրլովը Բիկա հասնելուն պէս՝ առանց ժամանակ կորսնցնելու սկսած է բազմաբուստից դպրոցը ուսուցնել: Շատ վիրաւոր և մեծածկայ:

Այս գլորդեցուցիչ լուրը, բոլորովին անսպասելի ժամանակի մը մէջ կը հասնի մեզի: Լիթւանիոյ նահանգին և պալմիկեան նահանգներու ամենանշանաւոր քաղաքն է Բիկան: Գիւղացիա յեղափոխական խռովութիւններու ժամանակ, համեմատութեամբ խաղաղ էր այս քաղաքը: Միայն ասկէ 2 ամիսներ առաջ, քաղաքի պահակազօրաց մէկ մասը ըմբոստացաւ:

Սակայն ի՞նչ նշանակութիւն ունի ներկայ հեռագիրը, ինչո՞ւ զօրավար Օրլով կը ուսուցնէ բազմաբուստից դպրոցը, ուսանողները պատուաբար են և կամ թէ պատամբ ամբողջ օրպէս ամբուստները մը ապաստանած էր հոն: Շատ դժուարին է այս մասին պատասխանել, որովհետեւ վերջին օրուան հեռագիրները Բիկայի և շրջակայի մէջ անց ու գարձի մասին բնաւ լուր մը չեն հաղորդեր:

— «Նոյնօթ վրէժիս» լրագրի գրածին համաձայն՝ կոմուտարսովէնա Տուժաի ընտրութիւնները յառաջիկայ մարտ 25 ին կատարուելու են: Տուժաի առաջին նիստը ապրիլ 15 ին պիտի գումարուի:

Կրուեստից և վաճառականութեան հոգածու ընկերութեան կողմանէ ներկայացած պատուիրակութեան, կոմս Վիթէն խոտացած է ամէն ջանք ի գործ դնել որ իրենք ալ օւնենան իրենց ներկայացուցիչները կառավարական խորհրդատու ժողովին մէջ:

— Բիկայէն կիմացնեն թէ՛ զինուորական դատարանին հաստատուելէն ի վեր, պալմիկեան նահանգի մէջ մահուան դատապարտուածներու թիւը, 1200 ի կը յանգի:

— Վարչախոյզէն կիմացնեն թէ՛ այնտեղի համալսարանի ուսուցիչներէն Պալսգի, Ասլէր, Գարլօ և Սամպուր զինուորական ատեանի կողմանէ մահուան դատապարտուած ըլլալով, ամսոյս 24 ին բերդին մէջ հրացանի բռնուած են:

— Օտէօայէն կիմացնեն թէ՛ երէկ չէ առջի օր Սեպագարովի մէջ, երկու սպայի, բժիշկի մը և 70 նաւաստիներու գատավարութիւնը սկսած են, ասոնք ամբաստանուած են որպէս կառավարութեան դէմ ըմբոստացողներ:

— «Ռուսքիյ Բուրիէր» լրագիրը կը հաղորդէ թէ՛ Կարոն քահանան արտասահման չը գրտնուիր այլ Բեթերսպուրկի մէջ, ուր գործառնութեանց նոր ծրագիրներու համար կաշխատի, այս ծրագիրներու մէջ է նաև լրագիր մը և գործաւորական վարկադրամատուն մը հաստատել:

Կրսեն թէ անոր այս ձեռնարկին Վիթէն ոչ թ կուտայ, այսպէս գործաւորական դասակարգի վերայ ազդեցութիւն մը ներգործելու համար:

— Արգարադատութեան նախարար, Արմիովի, ազարակային հաստատութիւնները որ Սարագովի նահանգին մէջ կը գրտնուին, բոլորովին աւերած են գիւղացիները ու բոլոր չենքերը կրակի տուած:

— Լիպուսէն հասած լուրերու համաձայն, հոն զինուորական ատեանի կողմանէ մահուան դատապարտուած են 12 յեղափոխականներ, անոնցմէ երկուքը յաջողած են փախչել, իսկ մնացած 10 հոգին հրացանի բռնուած են: Տուժաի գումարուելէն ամիս մը առաջ, արգի կառավարական խորհրդատու ժողովը պիտի դադրի պաշտօնավարելէ, և պիտի բացուի վերստին, որպէս երկրորդ օրէնսդրական ժողով, Տուժայի գումարուած պահուն:

Լուր կը շրջի թէ ձերսկուտական Գուլմիսպիին, որ աչքէ անցուց կողակալը, քիչ օրէն պիտի երթայ բոլոնական նահանգները աչքէ անցուցելու ու զննելու համար:

— Ինթերսպուրկեան քաղաքական շրջանակներու մէջ լուր կը շրջի թէ՛ համաշխարհային և կամ հասարակական պատերազմը անխուսափելի է:

ՅՆՈՐՀԱՎԱԼՈՒԹԻՒՆ

Ամենասիրելի եւ վաղամեռիկ զաւկիս—Ժիլայրի—մահուան առթիւ, անոր յուղարկուողութեան ներկայ գտնուող և նամակով քաղթով ու հեռագրով ցաւակցութիւն յայտնող ծանօթներու և բարեկամներու կը յայտնեմ խորին շնորհակալքս:

ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄ ԳՐԻԳՈՐԵԱՆ 25 Յունուար 1906 ՐՈՒՍՁՈՒՔ

Ա Ձ Դ

Ֆիլիպէի եւ շրջակայ հայ հասարակութեան կիմացնեն թէ՛ «Գրք պանի» Ազգային Հիւանդանոցի օրացոյցներ կը ծախեմ խիստ ատան գրիներով որոնք են:

Ֆիլիպէի համար գրպանի 40 սնթ. « զուրս գրպանի 45 » Փօստի ծախքը մեր վրայ, Փոխարձէքը նամակագրոյ՞ ալ կրնդունուի: Հասցէ՛ նշան Տուժանեան Ֆիլիպի 4-3

Ն Ո Ր Գ Ր Ք Ե Ր

Լոյս տեսաւ Ի Լօնսօն «ՊԱՏԱՆԻ» ամսագրերի տպարանէն:

ՊԱՏԱՆԻԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴՐՈՅ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ: Հեղինակութիւն Բրօք, Թուժախանի, Նիւթին շահեկանութիւնը եւ հեղինակին հմտութիւնը եւ ոճը մեծ արժէք կուտան այս 670 էջերէ բաղկացեալ և երկու հատորի բաժնուած գրքին: Գինը Պուլկարիոյ համար 4.40 ֆր. փոստով 4.80 ֆր.

Փափաքողները կրնան դիմել հետեւեալ Հասցէին

Բրրորգուդաւ սը շա Բըվի: «Պատանի» կամ Սէլ Տիս Մեյիտնեան Ա.Ա.Ռ.Ն.Ա. (Պոլիարիս)

Վճարումները պէտք է կանխիկ ըլլան:

ՆԱՍԱԿԱՏՈՒՓ

Ձը վճարող բաժանորդներուն. —Կը խնդրենք որ մինչեւ փետրվար շտապեն իրենց պարտքերը վճարել անպատճառ:

—Նոր բաժանորդները և ազդարարութիւն տուողները պէտք է ուշադրութիւն դարձնեն թերթիս ճակատը գրուած քաժանորդագրութեան և ծանուցման պայմաններուն:

—Սիլիստրէ — Պ. Գ. Հ. — Ձեր նամակին համաձայն 3 անգամէ աւելի է. որ թերթը կը լրկենք. կը սպասենք:

—Ժուրքիա — Ա. Վ. Ստացանք գրամը, կը շարունակենք թերթը լրկել:

ՊԱՇՏՏՈՒԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱՂՔ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՌՆԱԾԻ

Ընկերութեան Գործ. ժողովը՝ նրկատելով որ ժամանակէ մը ի վեր պաշտօնական մարմիններէ և թէ ազգայիններէ յանձնարարեալ աղքատներ տեղէ տեղ փոխադրելու համար ճանապարհածախս կը պահանջեն, ներկայիս կը փութանք յայտարարել թէ՛ ընկերութեան նպատակն է միմիայն աղքատ հիւանդներու բժիշկի դեղ և սնունդ հայթայթել, հետեւաբար այսուհետեւ այդպիսիներ որոնց կողմանէ ալ յանձնարարուած ըլլան բացարձակապէս պիտի մերժուին:

Այս առթիւ կը ծանուցանենք նաև թէ՛ ամէն անոնք, որոնք կը փափաքին ընկերութեան օժանդակել իրենց նուիրատուութեամբ, կրնան յանձնել իրենց նուիրենք Գանձապետ Տիար Գրիգոր Սիմոնեանի յԱզգ. խորհրդարանի:

Ի դիմաց Աղք Գործ. ժողովոյ Ասեւնապիւր Ատենապետ Ա. Չարպիւնէյեան Ս. Սամուէլեան (ԿՆԻԲ) Վառնա